



ՈՒՅԴԱ

ՆԵԼԼՈՆ ՅԵՎ ՊԱՏՐԱԾԸ

ՅԶԽ

ՈԼ-ՏԻ

ՀՐԱՏ 1937 ՅԵՐԵՎԱՆ

- 6 NOV 2011

38-16
ՍՁ 1813
825
ՈԼ-51

Ո Ւ Յ Դ Ա

ՆԵԼԼՈՆ ՅԵՎ ՊԱՏՐԱԶԸ

Նկարներ
ԴԱՎԻԴՈՎԱՅԻ



22-2282

Պ Ե Տ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Պատ. խմբագիր՝ Ռուբ. Զարյան
Լեզվի խմբագիր՝ Հ. Հառուրյունյան
Տեխ. խմբագիր՝ Աս. Ալթունյան
Սրբագրիչ՝ Ա. Արզումանյան



9 59829-66

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Մանուկ Նելլոն և Պատրաշ անունով մի մեծ շուն շատ մտերիմ բարեկամներ էյին: Նրանք գրեթե ամբողջ իրենց կյանքն ապրել էյին միասին: Յերկուսն ել վորբ էյին և յերկսին ել պատասպարում եր միևնույն բարի մարդը: Այդ ժամանակից նրանք մտերմացան ու պինդ սիրեցին իրար:

Նրանք ապրում էյին Անտվերպեն քաղաքից վոչ հեռու մի գյուղում: Շուրջը փոփում էյին դաշտերն ու մարզագետինները, վորոնց միջով անցնում եր լայն ջրանցքը: Ջրանցքի ափերը պատած էյին ուռենիներով ու բարդիներով: Հեովում յերևում եր Անտվերպենի տաճարի սրածայր աշտարակը և խաղաղ յեղանակին լսվում եր թե ինչպես զնգում եր նրա վրայի ժամացույցը: Գյուղակում բնդամենը մի յերկու տասնյակ տնակներ կային—սպիտակ, սվաղած պատերով, կրդմինդրե տանիքներով և վառ կանաչ կամ կապույտ ծածկափեղկերով: Գյուղի մեջտեղը, կանաչ բլրակի վրա, կանգնած է հողմաղացը: Յերբեմն նա կարմիր եր ներկված, բայց ժամանակից ու վատ յեղանակներից ներկը խունացել եր ու դարձել շիկազույն: Աղացի թևերն անհավասար էյին պտտվում, կարծես ամեն բոպե գայթում էյին ծերությունից ու հողացավից:

Նելլոն ու Պատրաշն ապրում էյին մի փոքրիկ տրնակում գյուղի ծայրին, մի գառամյալ, շատ աղքատ ծերունու մոտ: Այդ ծերունին, վորի անունն եր Ժեան Դասա, մի ժամանակ ծառայել եր բանակում, ծանր

վիրավորվել եր կռիվներում և տուն յեկել հաշմանդամ դարձած: Յերբ Դաասի ութսուն տարին լրացավ, մեռավ նրա միակ աղջիկը, վորն ապրում եր նրանից հետու, լեռներում: Նա՛ ծերունու խնամքին թողեց իր յերկու տարեկան բոլորովին վորբ տղային: Փոքրիկ Նելլոն կապվեց ծերունու հետ և պապիկն ու թոռնիկը խաղաղ ապրում էյին աղքատիկ տնակում:

Դա մի խղճուկ, կավածեփ խրճիթ եր, բայց մաքուր եր ու սպիտակ, ծովային խեցիի նման: Նրա կողքին կար մի փոքրիկ բանջարանոց, վորտեղ ցանում էյին լոբի, կաղամբ և դդում: Ժեան Դաասն ու Նելլոն ապրում էյին կիսաքաղց և պատահում եր, վոր պտուկում էյին քնելու առանց ճաշի, իսկ կուշտ ուտել նրանց յերբեք չեր հաջողվում: Ծերունին քնքուշ ու սիրալիբ եր վարվում իր թոռան հետ: Նելլոն սիրալիբ ու լսող յերեխա յեր: Նրանք սակավապետ էյին և միայն մի բան էյին ցանկանում՝ Պատրաշը միշտ նրանց հետ լիներ: Ձե՛ վոր նրանք չէյին կարող ապրել առանց Պատրաշի: Պատրաշը նրանց կերակրողն եր, ընկերը և բարեկամը: Յեթե Պատրաշը սատկեր կամ փախչեր նրանց մոտից, նրանց կմնար միայն պառկել և մեռնել: Ձե՛ վոր Ժեան Դաասը—մի ծեր հաշմանդամ եր, իսկ Նելլոն—մի անոգնական յերեխա: Ֆլանդրյան ցեղի բոլոր շների պես Պատրաշը շիկահեր, մեծ գլխով, գայլի ականջների նման ցցված ականջներով, մկանեղ իրանով և ամուր վոտքերով: Այդ շները սերունդից սերունդ ողնել են մարդկանց աշխատանքի մեջ և բեռնված սայլակներ քաշել: Պատրաշին ծանր, զրկանքներով լի մի կյանք եր վիճակվել: Դեռ լակոտ ժամանակ նա զրկվեց մորից և նրան վաճառեցին մի առևտրականի, զորը վաճառելու ամանեղեն եր ման ածում ամբողջ յերկրում, սկսած կապույտ ծովից մինչև անտառապատ լեռները: Նրան եթան զնով վաճառեցին, վորովհետև նա դեռ շատ փոքր եր: Նա դեռ մի տարեկան ել չկար, յերբ իմացավ, թե ինչ են սայլակի ծանրությունն ու լծասարքից առաջացած վերքերը: Վաճառորդը դաժան մարդ եր ու խիստ հարբեցող: Պատրա-

շի կյանքը դարձավ մի անվերջ տանջանք: Տերը սայլակին բեռնում եր կավե կճուճներ ու ամանեղեն, թիթեղե դուլլեր, պղնձե կժեր և ամեն տեսակի տնտեսական ամանեղեն: Պատրաշը պիտի քաշեր սայլակը, վորքան կարող եր, իսկ տերն որորվելով գնում եր կողքով, ծխելով ծխամորճն ու բաց չթողնելով վոչ մի պանդուկ ճանապարհի կողքին: Իր բախտից թե դժբախտությունից, Պատրաշն ուժեղ եր ու դիմացկուն: Նա կենդանի մնաց, չնայած նրան վիճակված եր կրել և քաղց, և ծարավ, և ծեծ, քացիներ ու մտրակի հարվածներ, վորոնց հետքերը պարզ յերևում էյին նրա կողքերին, և դրա հետ միասին հսկայական ծանրություններ քաշել:

Մի անգամ Պատրաշն իր բեռնված սայլակը քաշում եր չալահատակված փոշոտ ճանապարհով դեպի Անտվերպեն: Ամառվա ամենայեռուն շրջանն եր և սաստիկ չոգ: Տերն ըստ իր սովորության հաղիվ քաշ եր գալիս ծուլլ քայլվածքով, միայն ամեն բուպե լավում եր նրա մտքի շաչյունը, վորը դալարվում եր Պատրաշի ցնցվող կողերին: Տերը մեկ-մեկ դավաթ դարեջուր եր խմում ամենմի հանդիպած պանդուկում, իսկ Պատրաշին թուլլ չեր տալիս գոնե մի բուպեյով կանգ առնել առվից ջուր խմելու համար: Պատրաշը գնում եր արևի այրող ճառագայթների տակ տոթից շիկացած ճանապարհով: Նա ամբողջ որը վոչինչ չեր կերել և, վոր ամենից վատն եր նրա համար, միքանի ժամ վոչ մի կաթիլ ջուր չեր խմել: Արևը չլացնում եր աչքերը, մտրակի սպիներն անտանելի ցավում էյին, իսկ սայլակի ծանրությունը ճնշում եր ուսերը: Հանկարծ Պատրաշը յերերաց, փրփուրը տվեց բերանը և նա ընկավ:

Նա ընկավ փոշոտ ճանապարհի մեջտեղը, այրող արևի տակ և պառկեց անշարժ: Տերը նրան միայն մի դեղ ուներ տալու, վորին նա դիմում եր բոլոր դեպքերում, — քացիներ և ամուր մահակի հարվածներ: Սակայն Պատրաշի վրա չէյին ներգործում վոչ ծեծը, վոչ ել հայհոյանքները. նա պառկած եր սպիտակ փոշու մեջ անշարժ, ըստ յերեվույթին մեռած: Համոզվելով,

վոր անողուտ ե շանը ձաղկելն ու հայհոյելը, տերն ար-
ձակեց նրա լծասարքը և ուժեղ քացու մի հարվածով
զցեց նրան խոտով պատած առվի մեջ, ճանապարհի
կողքին: Սատկող Պատրաշին թողնելով բախտի կամքին՝
տերը զայրացած փնթփնթոցներով ինքը քաշ տվեց
սայլակը դեպի ներքև: Դա քաղաքում տեղի ունենալիք
տոնավաճառի նախորդակն եր, և նա շտապում եր այն-
տեղ, վորպեսզի իր սայլակի հետ մի հարմար տեղ
բռնի հրապարակի վրա:

Պատրաշը պառկել եր առվում, բարձր խոտի մեջ: Այդ
որը ճանապարհին մեծ աշխուժություն կար. հարյուր-
բավոր մարդիկ տոնավաճառեյին գնում, վորը վորքով,
վորն ել սայլակով կամ կառքով: Վոմանք չէյին նկա-
տում Պատրաշին, վոմանք ել տեսնում եյին նրան, բայց
կանգ չէյին առնում: Մի շուն ե սատկում, —ի՛նչ մեծ
բան ե վոր...

Ի՛նչ անց՝ տոնական բազմության միջև յերևաց մի
կորաքամակ, կաղ ծերունի: Նա հագնված եր շատ աղ-
քատիկ և քայլում եր դանդաղ ու լուռ: Նա նայեց Պատ-
րաշին, կանգ առավ քարացածի պես, հետո իջավ
առուն, չոքեց խիտ խոտի մեջ և յերկար դիտում եր
անշարժ պառկած շանը: Նրա հետ կար բաց խաբ-
տյաշ մագերթով, սևաչյա մի տղա, մոտ յերեք տարե-
կան: Բարձր խոտը հասնում եր մինչև նրա գոտկատե-
ղը: Յերեխան կանգնել եր ու խղճահարությամբ նա-
յում եր անշարժ շանը: Այդ փոքրիկ Նելլոյի առաջին
ծանոթությունն եր մեծ Պատրաշի հետ:

Ժեան Դասան անասելի դժվարությամբ քաշ տվեց
Պատրաշին իր խրճիթը, վոր հեռու չեր ճանապարհից:
Պատրաշը շոգից, ծարավից ու հյուստվածությունից
արևահար եր յեղել և դրանից եր, վոր վայր եր ըն-
կել: Շատ շարաթներ նա պառկեց հյուստված հի-
վանդ, ուժասպառ, գրեթե կիսամեռ: Վոչ վոք չեր
բղավում վրան, վոչ վոք չեր հրում նրան: Նա լսում
եր միայն մանկան ցավակցական թոթովանքը և զգում
եր, թե ինչպես փաղաքշում ե իրեն ծերունու ձեռքը:

Հիվանդության ժամանակ Պատրաշին խնամում

եյին զառամյալ ծերունին և փոքրիկ, անհող յերե-
խան: Պատրաշը պառկած եր հյուստված անկյունում՝
խոտի վրա: Գիշերները նրանք ականջ եյին դնում—
չնչում ե արդյոք շունը, կենդանի՞ յե արդյոք: Յերբ
Պատրաշն առաջին անգամ խոպոտ ձայնով հաջեց,
նրանք քիչ մնաց լաց լինեյին ուրախությունից. այդ
առողջանալու նշան եր: Փոքրիկ Նելլոյին այդ այնպի-
սի հրճմանք պատճառեց, վոր յերիցուկներից հյուսած
մի սլասկ հագցրեց Պատրաշի վզին ու համբուրեց
նրան:

Պատրաշը դանդաղ եր առողջանում և, վերջապես,
սկսեց հազիվ կաղկղալ իր սեփական վոտքերի վրա:
Զգալով սիրալիբ վերաբերմունքը, նա կապվեց իր
այդ բարեկամներին: Ամբողջ որը նա պառկում եր
արևի տակ, շենքի մոտ և իր խոշոր, մուգ աչքերով
հետևում նրանց յուրաքանչյուր շարժումին:

2

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՐԻՆԵՐ

Կաղ ծերունի Ժեան Դասաը իր ապրուստը հո-
պում եր նրանով, վոր ամեն որ, կով ունեցող իր հա-
րկանների հանձնարարությամբ, ձեռքի սայլակով մի
քանի կուժ կաթ եր տանում Անավերպեն՝ ծախելու:
Մակայն, այդ աշխատանքը քանի դնում՝ ավելի ծանր
եր դառնում ծերունու համար, վորովհետև նա արդեն
յոթանասուն յերեք տարեկան եր:

Մի անգամ Պատրաշը, վոր արդեն կաղուրովել
եր, ըստ իր հին սովորության կանգնեց սայլակի լծա-
փայտերի արանքում, կարծես ցույց տալով, վոր ին-
քը պատրաստվում ե սայլակը քաշելու: Վորնովհե-
տեվ լծասարք չուներ, ուստի նա նույնիսկ փորձեց ա-
տամներով քաշել սայլակը: Տեսնելով այդ, Դասաը
մի լծասարք սարքեց նրա համար և Պատրաշն այդ
որվանից ամեն առաջին սայլակը տանում եր քաղաք:

Յերբ ձեռքը վրա հասավ, Ժեան Դասան ուրախու-

Թյունից չգիտեր ինչ աներ, վոր Պատրաշի պես մի շուն ե ընկել ձեռքը: Նա ինքն արդեն այնքան եր ծե-
րացել և ուժասպառ յեղել, վոր չեր կարող քաշել
բեռնված սայլակը ձյունի հյուսերի վրայով կամ
խորը ցեխի միջով: Իրա փոխարեն Պատրաշը, վոր
արդեն բոլորովին առողջ եր, շատ հեշտությամբ եր
քաշում սայլակը: Այն ուժից վեր ծանրություններից
հետո, վոր նա ստիպված եր կրել իր նախկին տիրոջ
համար, փոքրիկ, բաց կանաչավուն սայլակն իր փայ-
լուն կժերով գրեթե խաղալիք եր թվում նրան: Մինչև
ցերեկվա ժամը յերեքը կամ չորսը նրա աշխատանքը
վերջանում եր և դրանից հետո նա կարող եր անել
այն, ինչ վոր քեֆն ուզեր՝ պառկել ու քնել արևի
տակ, ման գալ դաշտում, թռչկոտել փոքրիկ տղայի
հետ, կամ խաղալ մյուս շների հետ: Պատրաշը միան-
գամայն բախտավոր եր զգում իրեն:

Սնցավ ելի մի տարի: Հաջմանդամ ծերունի
Դասսի վոտքերն սկսեցին այնքան ուժեղ ցավել, վոր
նա այլևս չեր կարողանում գնալ սայլակի յետևից:
Այդ ժամանակ նրան փոխարինեց վեց տարեկան Նել-
լոն: Նա լավ գիտեր քաղաքը, վորովհետև շատ անգամ
եր այնտեղ գնացել իր պապիկի հետ:

Փոքրիկ Նելլոն գեղեցիկ մանուկ եր, խոշոր ու
խաժ աչքերով, կարմիր թշերով և մինչև ուսերն իջ-
նող խարտյաչ գանգուրներով: Հաճախ եր պատահում,
վոր վորևե նկարիչ նկարում եր իր մոտից անցնող
կանաչ սայլակը պղնձե կժերով, մեծ շիկագույն շու-
նը՝ լծասարքի վրայի գանգակներով և սայլակի յե-
տևից վազող մանկանը՝ փայտի քոշերը հագած բոբիկ
վոտքերին:

Նելլոն և Պատրաշն այնքան լավ և համերաշխ եյին
կատարում այդ աշխատանքը, վոր նույնիսկ ամառը,
յերբ Դասսն իրեն ավելի լավ եր զգում, կարիք չկար,
վոր նա՛ տաներ սայլակը: Նա կարող եր նստել դռների
առաջ, ճանապարհ դնել նրանց իր հայացքով, յերբ
նրանք դուրս եյին գալիս դարպասի դռնակից, իսկ
հետո տաքանալ արևի տակ, մտածել վորևե բանի մա-



Նելլոն և Պատրաշը լավ ու համերաշխ եյին
կատարում աշխատանքը:

սին կամ նիրհել: Հենց վոր աշտարակի ժամացույցը խփում էր յերեքը, նա արթնանում էր ու սպասում էր իբր սիրելիներէ վերադարձին: Պատրաշն ուրախ հաջոցով գցում էր վրայից լծասարքը, իսկ Նելլոն խելացի կերպով պատմում էր պապիկին, թե ինչպես երանցել այդ որը: Հետո յերեքով միասին գնում էյին ճաշելու: Ճաշը բաղկացած էր լինում հաճարե հացից ու կաթից կամ շիլլայից: Կամաց-կամաց մեծ տափաստանի սովերները յերկարում էյին և աղջամուղջը պատում էր տաճարի գեղեցիկ նետաձև աշտարակը: Այն ժամանակ նրանք պառկում էյին քնելու:

Այդպես անցնում էյին որերն ու տարիները: Նելլոն և Պատրաշն աշխույժ էյին, ուրախ և առողջ: Նրանք առանձնապես սիրում էյին գարունն ու ամառը, յերբ ազատ էյին զգում իրենց: Նրանք խաղում էյին խոտերի մեջ կամ պառկում հով սովերում՝ ջրանքի ափին և նայում թե ինչպես են լողում իրենց մոտով բեռնանավերը՝ իրենց ծածանվող վառ դրոշակներով:

Չմեռն ավելի վատ էր: Յերկու բարեկամները վեր էյին կենում միմով, յերբ դեռ ցուրտ էր և ուղևորվում էյին քաղաք: Հյուղակը, վոր ամառն այնքան գրավիչ էր ու ամբողջովին պատած վայրի խաղողի վազերով, ձմեռային գիշերները լավ չէր պաշտպանում ցրտից: Չմեռը քամին սուլում էր կավածեփ խրճիթի պատերի անցքերում, վայրի վազը տերևաթափ էր լինում, դաշտերը մռայլորեն սևին էյին տալիս, և հաճախ գետինը սառցակալում էր: Այո, ձմեռը բավական դժվար էր. ձյունից ու ցրտից տղայի մարմինը թմրում էր, իսկ անխոնջ Պատրաշի վոտքերը վերափորվում էյին սառցակալած գուղձերի վրա: Սակայն այդ ժամանակ էլ նրանք չէյին վհատվում: Տղայի վոտքերը, փայտե քոչերի մեջ, և Պատրաշի չորս վոտքը ամուր դուխում էյին սառած դաշտերում Պատրաշի լծասարքի զանգակներէ զրնգոցի տակ: Յերբեմն Անտվերպենի փողոցներում վորեւ տանտիկին կերակուր ու մի կտոր հաց էր տալիս նրանց, կամ յերկու կտոր փայտ գցում դատարկ տուն վերադարձող սայլակը: Յերբեմն էլ իրենց

գյուղի գեղջկուհիներից մեկը նվիրում էր նրանց այն կաթի մի մասը, վոր նրանք տանում էյին քաղաք ծախելու: Յեվ նրանք վաղ առավոտյան առույզ վազում էյին ճանապարհով, և տուն էյին վերադառնում բերկրալից աղազակներով: Պետք է ասել, վոր նրանք ընդհանրապես վատ չէյին սպրում:

3

ՅԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ

Ծովափնյա Անտվերպեն քաղաքը իր առևտրական նավահանգիստներով, կեղտոտ, կեռ սև մեռ նեղլիկ փողոցներով, շուկայի մեծ հրապարակով և մռայլ դուրջ աներով ինքն ըստ ինքյան ուշադրության արժանի չէր, բայց այդ քաղաքը համբավ ձեռք բերեց նրանով, վոր այնտեղ ապրել ու մեռել էր մեծագույն նկարիչներից մեկը—Ռուբենսը:

Ռուբենսի նշանավոր նկարները գտնվում են վո՛չ միայն թանգարաններում: Ըստ այն ժամանակի սովորության նա մի քանի խոշոր նկար էր արել իր հայրենի քաղաքի տաճարի ներքին պատերի վրա և զանազան յերկրներից մարդիկ դալիս են Անտվերպեն, վոր տեսնեն այդ նկարներն ու Ռուբենսի սպիտակ մարմարե հոյակապ դամբարանը, քանի վոր նա թաղված է նույն տաճարում իր նկարների տակ:

Պատրաշին դուր չէր դալիս, վոր քաղաքում յեղած ժամանակ Նելլոն հաճախ մտնում էր տաճարը և անհայտանում մութ կամարների տակ, իսկ իրեն մեռնակ թողնում փողոցում: Մեկ յերկու անգամ նա փորձեց աստիճաններով վեր բարձրանալ իր սայլակի հետ, բայց դունդին կանգնած պահակը քշում էր նրան: Պատրաշն ստիպված էր լինում համբերությամբ սպասել, թե յերբ պիտի տղան դուրս գա: Նելլոն դուրս էր գալիս այնտեղից մերթ վառվառն դեմքով, մերթ, ընդհակառակը, շատ գունատ: Այդպիսի այցելությու-

նից հետո տուն վերադառնալով՝ նա նայում էր լուսահեռուն, արևի մայրամուտին:

Պատրաշն աշխատում էր թույլ չտալ, վոր տղան հեռանա իրենից շուկայի մեծ հրապարակում, բայց վոչինչ չէր ոգնում: Նեյլոն, այնուամենայնիվ, մտնում էր տաճարը: Պատրաշը նրան սպասելով, պառկում էր գետնին, հորանջում, մեկ մեկ էլ նույնիսկ վոռնում, բայց դա անոգուտ էր: Տղան դուրս չէր գալիս, մինչև վոր փակում էին մուտքի դուռը: Գրկելով Պատրաշի վիզը, նա համբուրում էր նրա լայն շիկագույն ճակատը և միշտ շնջում միևնույն բանը:

— Ախ, յեթե յես կարողանայի տեսնել «նրանց», Պատրաշ: Յեթե միայն յես կարողանայի տեսնել «նրանց»:

Պատրաշը նայում էր նրան իր բարի և խելոք աչքերով, բայց վոչինչ չէր հասկանում: Մի անգամ, յերբ պահակը կանգնած չէր իր սովորական տեղը և դուռը բաց էր, Պատրաշը վազեց իր փոքրիկ բարեկամի յետևից ու ներս մտավ: «Նրանք» — ը յերկու մեծ նկարներ էյին կողքի պատերի վրա, ծածկված վարագույրներով: Նեյլոն կանգնել ու հիացած նայում էր Ռուբենսի յերրորդ, բաց նկարին: Տեսնելով Պատրաշին, նա շուտ յեկավ ու կամացուկ դուրս տարավ շանր: Նրա աչքերին արտասուքներ կային և, անցնելով ծածկված նկարների մոտով, նա շնջաց իր ուղեկցին՝

— Ինչ վատ է, վոր «նրանց» վրա չի կարելի նայել, Պատրաշ: Չի կարելի, վորովհետև յես փող չունեմ և չեմ կարող վճարել: Յերբ նկարիչը նկարում էր իր այս նկարները, հավանորեն չէր ցանկանում, վոր թագցնեյին այդ նկարները չքավորներից: Յես հավատացած եմ, վոր նա կուզենար, վոր մենք նայենք նրանց միշտ, վորքան ուղենանք, թեկուզ ամեն ոք, իսկ մարդիկ այդ հրաշայի նկարները թագցրել են վարագույրների տակ: Նրանց վրա լույս չի ընկնում, և վոչ վոք չի նայում նրանց, բացի հարուստներից, վորոնք կարող են վճարել: Ախ, յես իմ կյանքը կտայի այդ նկարները տեսնելու համար:

Սակայն նա չէր կարող տեսնել այդ նկարները, վորովհետև դրա համար տաճարը պահանջում էր մի արծաթյա Փրանկ, իսկ նա ու Պատրաշն այդ Փրանկը վաստակելու հնարավորություն չունեյին: Նրանք վաստակում էյին ամենաշատը մի քանի սանտիմ, վորը բավականացնում էր միայն ճաշի համար հաց և վառարանի համար մի քանի տաշեղ գնելու:

Նեյլոն, վաղ առավոտյան հին քաղաքի փողոցներով անցնելիս մտքով սլանում էր դեպի մեծ Ռուբենսը: Նույնիսկ ցրտին, յերբ քամին զգզզում էր նրա դանդուրները և առագաստի պես ուռցնում նրա մաշված վերնաշապիկը, Նեյլոն փայտյա քոչերը բորիկ վորքերին հազած քայլում էր խոր մտքի մեջ ընկած և իր առջ տեսնում էր միայն Ռուբենսի նշանավոր նկարները:

Նեյլոն մեծանում էր իբրև մի չքավոր տղա և հնարավորություն չուներ նույնիսկ դպրոցում սովորելու: Միայն պապը կարող էր գրագիտություն սովորեցնել նրան: Իրա փոխարեն բնությունը նրա բախտից թե դժբախտությունից, տաղանդ էր շնորհել նրան: Վոչ վոք չգիտեր այդ, վոչ վոք նույնիսկ չէր կասկածում, բացի իրենից: Միայն Պատրաշը, վոր յերբեք չէր բաժանվում նրանից, տեսնում էր, թե ինչպես նկարում է նա կավիճով քարի վրա այն ամենը, ինչ տեսնում և լսում էր, թե ինչպես նա, խտտով լցրած իր ներքնակի վրա պառկած՝ ինչ վոր անհասկանալի բաներ էր փնթփնթում մեծ Ռուբենսի մասին: Յեվ հաճախ մատաղ Նեյլոյի աչքերից այրող արցունքներ էյին թափվում Պատրաշի շիկահեր բրդոտ գնչի վրա:

— Յես հանդիստ կմեռնեյի, Նեյլո, յեթե իմանայի վոր դու յերբեվիցե կկարողանաս գնել այս խրճիթն ու փոքրիկ հողակտորը, — հաճախ ասում էր տղային անգամալույծ պապը: — Դու կսկսես մշակել հողը և հարեվանները քեզ տանտեր կանվանեն:

Յուրաքանչյուր չքավոր գյուղացի իր համար մեծ բախտ էր համարում՝ ձեռք բերել իր սեփական փոքրիկ

հողակտորը, վորպեզի գյուղում նայեյին նրա վրա վորպես տանտիրոջ: Մերունի Դասար, վոր իր ամբողջ կյանքն անց եր կացրել արչավանքներում և տուն եր վերադարձել դատարկ գրպանով, վոչ մի ուրիշ ավելի լավ բան չեր կարող ցանկանալ իր սիրելիին քան հող մշակել մինչև իր կյանքի վերջը:

Նելլոն վոչինչ չեր պատասխանում գրան: Սակայն նա ամենեւին այն չեր յերազում, թե ինքը հետագայում մի փոքրիկ հողակտոր պիտի մշակի ու հարեւաններն ել նրան տանտեր պիտի պնդանեն:

Այն նետաձև աշտարակը, վոր նա տեսնում եր հեռվից մայր մտնող արևի կարմրավուն շողերի տակ, կամ վաղ առավոտվա աղոտ լույսի մեջ, ինչ վոր ուրիշ ապագա յեր մրմնջում նրա ականջին: Իր յերազանքները նա պատմում եր միայն Պատրաշին, մանկան նման շշնջալով նրա ականջին, յերը նրանք լուսաբացի աղջամուղջին գնում էյին աշխատանքի, կամ պառկած էյին լինում ջրանցքի ավին, վորտեղ աղմկում եր յեղեգնուտը: Այդ յերազանքները դժվար եր այնպես արտահայտել խոսքերով, վոր մարդկանց մեջ կարեկցություններ առաջացնի: Դրանք կարող էյին միայն անհանգստացնել և վշտացնել ծեր Դասսին, վոր անշարժ պառկած եր իջ անկյունում. չե վոր ծերունին չեր հասկանում թե ինչ տարբերություն կա գոեհկաճաչակ պատկերների ու մեծ նկարիչի նկարների միջև: Նա չգիտեր, վոր այդ նկարները տեսնելու համար մարդիկ գալիս են աշխարհի բոլոր ծայրերից:

Բացի Պատրաշից, Նելլոն իր խիզախ յերազանքների մասին սիրտ եր անում խոսել միայն իր մտերիմ ընկերուհու՝ Ալոիզայի հետ: Դա մի տասներկու տարեկան աղջիկ եր, կանաչ բլրակի վրա գտնվող կարմիր հողմաղացի տիրոջ միակ դուստրը: Հողմաղացի տերն ամենաուսուկող գյուղացին եր գյուղում: Ալոիզան ամեն որ դաշտ եր գալիս Նելլոյի և Պատրաշի հետ խաղալու: Նրա այտերը վառվում էյին, և աչքերը փայլում, յերը նա վազվզում եր նրանց հետ ձմեռը ձյունի վրա, կամ ամառը խոտի մեջ: Յերեխաները միասին հատապտուղ

և ծաղիկներ էյին հավաքում և պսակներ հյուսում կամ նստում էյին ջրանցքի ափին: Ալոիզան միշտ մաքուր հագնված եր լինում: Նրա կապույտ սարժե հագուստի վրա վոչ մի պատված տեղ չկար: Տոնավաճառին մի կույտ վոսկեգոծ ըմպելիքներ և շաքարեղեն էյին գնում նրա համար: Մնողները սիրում ու յերես էյին տալիս նրան և նրանց տանն ամեն ինչ լի յեր ու առատ:

4

ԱՂԱՑՊԱՆԸ

Ալոիզայի հայրը՝ աղացպան Կոզետը, խիստ և պահանջկոտ մարդ եր: Մի անգամ իր կալվածներում չրջելիս նա տեսավ իր աղջկան հողմաղացի յետևի մարգագետնում, վորտեղ հենց նոր վերջացել եր խոտի հունձը: Ալոիզան նստել եր թարմ խոտի վրա, իսկ կողքին, գլուխը նրա ծնկներին դրած, տեղավորվել եր Պատրաշը: Նրանք յերկուսը զարդարված էյին կարմիր կակաշներից ու կապույտ տերեփուկներից հյուսած պսակներով: Քիչ հեռու նստել եր Նելլոն և ածուխի կտորով նկարում եր նրանց սոճու հարթ տախտակի վրա:

Հողմաղացի տերը կանգ առավ, Նելլոյի ուսի վրայով նայեց սիրելի աղջկա պատկերին և շմեց պատկերի գարմանալի նմանությունից: Սակայն նա նախատեց աղջկան, վոր այստեղ անդործ քաչ ե գալիս և տուն ուղարկեց նրան:

Ալոիզան վախից լաց յեղավ ու փախավ: Այդ ժամանակ աղացպանը մոտեցավ Նելլոյին ու խլեց նրա ձեռքից տախտակը:

— Դու հաճախ ես այսպիսի հիմարություններ անում, — խիստ ձայնով հարցրեց նա:

Նելլոն կարմրեց մինչև մազերի արմատներն ու գլուխը կախեց:

— Յես նկարում եմ այն բոլորը, ինչ տեսնում եմ, — շշնջաց նա:

Աղացպանը մի փոքր լուեց, հետո գրպանից հանեց

մի արծաթե Փրանկ, պարզեց տղային ասելով:

— Դատարկ բաներ ես անում, ասում եմ քեզ, և դուր ժամանակ ես կորցնում: Այնուամենայնիվ այդ բանը նման է Ալոիզային: Առ քեզ ես փողը նկարի համար:

Կարմրությունն անցավ Նելլոյի յերեսից: Նա բարձրացրեց գլուխն ու ձեռքերը տարավ դեպի յետ:

— Պահեք ձեզ փողն ել, պատկե՛րն ել, պարոն Կոդես, — ասաց նա, կանչեց Պատրաշին ու գնաց նրա հետ մարդագետնով:

— Յես կարող եյի «նրանց» տեսնել այդ Փրանկով, — շնչաց նա Պատրաշին, — բայց նույն իսկ դրա համար չեյի կարող ծախել նրա պատկերը:

Վերադառնալով տուն՝ Կոդեսն ասաց կնոջը:

— Չլինի թե Ալոիզան մյուս անգամ խաղա այդ լակոտի հոտ, լսում ե՞ս: Նա նրա ընկերը չի:

— Բայց չե՞ վոր նա լավ և համեստ տղա յե, — առարկեց կինը, չհեռացնելով աչքերը սոճու տախտակիկից, վորն աղացականը դրեց բուխարու վրա կկույով փայտյա ժամացույցի տակ:

— Դու մի՛ հակառակվիր ինձ, — բղավեց նրա վրա աղացականը, վառելով ծխամորճը:

— Դե, յես հո սուտ չեմ ասում, — շփոթված ասաց կինը:

— Դու հիմար ես, — ավելի բարձր բղավեց աղացականը, խփելով ծխամորճը սեղանին: — Տղան մուրացկանի մեկն է, ինքն էլ իրեն նկարիչ է յերևակայում: Տես, վոր աղջիկը նրա մոտ ալլես յերբեք չխաղա, թե չէ յես կտանեմ նրան քաղաք ու գիշերոթիկ կտամ:

Մայրը վախեցավ ու խոսք ավեց կատարել նրա կամքը: Նա խղճում էր աղջկան, վոր պիտի անջատվի իր սիրելի խաղընկերից միայն այն պատճառով, վոր նա չքավոր է: Սակայն սիրտ չեր անում հակառակվել մարդուն, վախենալով, թե նա կկատարի իր սպառնալիքն ու իսկապես քաղաք կտանի աղջկան: Նա վոչինչ չասաց Նելլոյին, բայց զանազան պատրվակներով Ալոիզային հեռու յեր պահում նրանից: Նելլոն վիրավորված էր համարում իրեն և դադարեց Պատրաշի հետ գնալ աղացը, ուր վազում էր ամեն մի ազատ րոպե: Ինչ է պատահել,

նա չգիտեր, բայց կարծում էր, վոր աղացականն իր վրա բարկացել է Ալոիզայի պատկերի համար:

Աղջիկը կարտում էր Նելլոյին և նրան մոտ էր վազում, բայց նա տխուր ժպտում էր և ասում մտազբաղ ու լուրջ:


— Չե՛, Ալոիզա, մեզ չի կարելի միասին խաղալ, — հայրդ կբարկանա:

Սակայն, նրա սիրտը ճմրվում էր, և արեն ալլեսայնպես չեր ուրախացնում նրան, յերբ նա լուսարացին ընտանիքին, ցածրիկ դռնակի վրա իսկույն և եթ վերադառնալիս նա անցնում էր հին կարմիր հողմաղացի մոտով: Առաջ նա միշտ ուրախ բարևում էր աղացականի ընտանիքին, և ցածրիկ դռնակի վրա իսկույն և յեթ յերևում էր խարտյաչ գլուխը և մի փոքրիկ ձեռք դեպի Պատրաշն էր պարզում մի կտոր վոսկոր կամ հաց: Իսկ հիմա Պատրաշը վհատ նայում էր փակ դռնակին և տղան շտապում էր անցնել առանց կանգ առնելու: Իսկ այդ ժամանակ Ալոիզան ձեռագործը ձեռքին նստած էր լինում նստարանին, բուխարու մոտ և նրա աչքերից դանդաղ կաթում էյին արցունքները: Ալլուրով լիքը պարկերը դես ու դեն տալով, աղացականը, մոտից անցնող աղային տեսնելիս, համառորեն պնդում էր քթի տակ:

Նյդպես լավ է: Տղան աղքատ է և նրա գլուխը լիքն է հիմար ցնդարանություններով: Կարիք չկա նրա հետ ծանոթություն շարունակելու:

Իսկ փոքրիկ սոճու տախտակիկն, այնուամենայնիվ, կանգնած էր բուխարու վրա, կկույով ժամացույցի տակ, և տղայի համար ծանր էր գզալ, վոր իր նվերն ընդունեցին, իսկ իրեն չէն էլ ուզում ճանաչել: Սակայն նա չեր դանդատվում և լուռ տանում էր վիրավորանքը: «Չքավորները նույնպես յերբեմն մեծ են դառնում և այն ժամանակ մարդիկ նրանց ուրիշ կերպ են վերաբերվում», մտածում էր նա:

Այդ միտքը սփոփում էր նրան: Մի անգամ Ալոիզան, պատահաբար հանդիպելով ջրանցքի մոտ, մոտեցավ նրան և, դառնազին լալով ասաց, վոր վաղն իր



ծննդյան որն է, ինչպէս միշտ, կալում յերեխաների համար խաղեր և հյուրասիրութիւն և սարքվելու, բայց այս տարի իր ծնողներն, առաջին անգամ իր կյանքում, չեն հրավիրում նրան այդ փոքրիկ տոնախմբութեանը:

Նեյլոն փողաբջեց նրա ձեռքը և վստահ ձայնով պատասխանեց.

— Այդ բոլորը յերբեմիցե կ'փոխվի, Ալոիզա: Ժամանակին իմ սոճու տախտակը, վոր կանգնած է ձեր բուխարու վրա, իր կշռովը մեկ արծաթ կղնահատովի և այն ժամանակ քո հայրը չի փակի դուռն իմ առջև: Համատա, սիրելի Ալոիզա, վոր յես ժամանակով մեծ հռչակ կուեննամ:

— Իսկ յեթե հանկարծ յես չհավատամ,— փորձեց կատակ անել աղջիկը:

Նեյլոն շուտ տվեց գլուխն ու նայեց հեռուն, վորտեղ մայր մտնող արևի լույսով փայլում էր աշտարակի ծայրը: Տղայի յերեսին Ժպիտ կար, վորն այնքան լի յեր հիացմունքով և միևնույն ժամանակ այնքան տխուր, վոր Ալոիզան վախեցավ:

— Միևնույն է, յես հռչակավոր կդառնամ,— ասաց նա հազիվ լսելի ձայնով:— Հռչակավոր կդառնամ, կամ կմեռնեմ, Ալոիզա:

Նա գնաց տուն ճանապարհին Ժպտալով և դլովիւր տարուբերելով: Իր յերագանքներում նա տեսնում էր, թե կգա մի օր, յերբ ինքը կվերադառնա իրենց գյուղը, և փոխանակ յերես շուտ տալու, իրեն կզխմավորեն մեծ հարգանքով: Գյուղացիները կսկսեն խմբվել նրան ընդունելու համար և կիսփսան իրար:

— Տես, դա մեծ նկարիչ է, նրա անունը հայտնի յե վողջ աշխարհին: Բայց չե վոր յերբեմն մենք նրան ճանաչում եյինք վորպէս փոքրիկ Նեյլո, վորը մի կտոր հաց էր վաստակում իր շան ոգնութեամբ:

Այնուհետև Նեյլոն պատկերացնում էր, թե ինչպէս աղջկանը կհագցնի թավչյա բաձկոն մօրթե յերիզներով և կնկարի նրա պատկերն այնպէս, ինչպէս Ռուբենսի նկարի վրայի ծերունին է նկարված: Հետո Պաարաչի



Ամբողջ գարունն, ամառն ու աշունը Նեյլոն աշխատում էր իր նկարի վրա:

Համար մի վոսկե վզնոց կալաովիրի և, կանգնեցնելով նրան իր կողքին, ժողովրդին դիմելով կասի.

Մի ժամանակ սա իմ միակ բարեկամն եր:

Հետո նա կկառուցի մի մեծ, սպիտակ մարմարե սլալա՝ իր փարթամ պուրակով, բայց ինքը չի ապրի նրա մեջ, այլ կդարձնեն այն մի ապաստան բոլոր աղքատների ու վորր յերեխաների համար, վորոնք ձգտում են դեպի մեծ գործերը: Յեւ յեթե նրանք սկսեն իրեն փառաբանել դրա համար, ինքը միշտ կասի նրանց.

— Ձե, ինձ չե, վոր պիտի շնորհակալություն հայտնեք, այլ Ռուբենսին: Ի՞նչ կլինեյի յես առանց նրան:

Յեւ այդ դեղեցիկ յերազանքները, վորոնք այնքան հեռու եյին իրականությունից, միամիտ եյին և՛ համակված անսահման սիրով դեպի մեծ նկարիչը, վորին նա վերցնում եր իրեն իբրև որինակ, նրան այսպիսի ուժ եյին ներշնչում, վորնա յերջանիկ երզգում իրեն: Նա իրեն յերջանիկ երզգում նույնիսկ Ալոիզայի ծննդյան այդ ախուր որը, յերբ նա Պատրաչի հետ վերադարձավ փոքրիկ ու խավար հյուղակը, վորտեղ նրանց սպասում եր միայն հաճարի հացից բաղկացած ճաշը, իսկ հողմազացի յեռեում գյուղի բոլոր յերեխաները յերգում ու ծիծաղում եյին, ուտում եյին քաղցր բլիթներ ու կարկանդակներ և աստղերի լույսով պարում եյին մեծ կալի մեջ, ջութակների ու Ֆլեյտաների հնչյունների տակ:

— Վոչի՛նչ, Պատրաչ, — ասում եր նա գրկելով շան վիզը, յերբ նրանք միասին նստած եյին խրճիթի շեմքին և գիշերվա քամին բերում եր ուրախ ծիծաղը հողմազացից ու հասցնում նրանց:

— Վոչի՛նչ, այդ բոլորն իր ժամանակին կփոխվի:

— Նեյլո, եսոր, կարծեմ Ալոիզայի ծննդյան որն է, — հարցրեց պապիկը, վորը նույնպես իր անկյունում լսում եր յերաժշտության ձայները:

Տղան վաղեց պապիկի մոտ: Նա վշտացած եր, վոր ծերունին հիշեց այդ որվա մասին:

— Իսկ ինչո՞ւ դու չես գնացել նրանց մոտ, — շարունակեց պապը:

Նեյլոն ախ քաշեց:

— Ի՞նչ ե պատահել, Նեյլո, — հարցրեց պապը: — Չլինի կովել ես աղջկա հետ, Նեյլո.

— Ո, վո՛չ, վո՛չ, պապի, — արագ պատասխանեց տղան, ամբողջովին բռնկվելով: — Պարզապես պարոն Կոզեսը պատվիրել է, վոր ինձ չհրավիրեն:

— Մի՞թե դու վորեւէ վատ բան ես արել:

— Կարծում եմ, վոչ: Յես նկարեցի Ալոիզայի պատկերը սոճու տաշեղի վրա: Այսքանը միայն:

— Հը-ը՛մ—ծերունին լռեց: Տղայի պատասխանից նա դլխի յեր ընկնում, թե ինչ է պատահել: Նա Նեյլոյի գանգրահեր գլուխը սեղմեց իր կրծքին և ասաց զողջուն ձայնով.

— Դժվար է քեզ համար գլուխ պահելը, զավակս: Դժբախտություն է աղքատ լինելը:

— Վոչ, յես աղքատ չեմ, յես հարուստ եմ, — շըշըջաց Նեյլոն:

Իր յերազանքներում նա իր տաղանդը համարում եր այնպիսի գանձ, վորը դին չունի և վորը վոչ վոք չի կարող խլել իրենից: Նա դուրս յեկավ, կանգնեց խրճիթի շեմքին և նայում եր, թե ինչպես փայլում են աստղերը մութ աշնանային յերկնքում և ինչպես քամին տարուբերում է բարձր բարդիները: Աղացպանի տան բոլոր լուսամուտները լուսավորված եյին և ժամանակ առ ժամակ դեռ լսվում եր յերաժշտությունը: Արտասուքները գլորվում եյին Նեյլոյի այտերի վրայից, վորովհետև նա այնուամենայնիվ յերեխա յեր, բայց հետո ժպտաց ու ասաց ինքն իրեն.

— Միշտ այսպես չի՛ լինի:

Նա կանգնեց դռան մոտ մինչև այն ժամանակ, յերբ ամեն ինչ հանդարտվեց և յերբ բոլորովին մթնեց, ու այն ժամանակ Պատրաչի հետ միասին մտան խրճիթ: Նրանք պառկեցին իրար կողքի և յերկուսով ել խորքուն մտան:

Հիմա Նեյլոն մի գաղտնիք ունեւր, վորը միայն Պատրաշը գիտեր: Խրճթի մտա գտնվում եր մի փոքրիկ ցախատուն, դատարկ ու անհրապույր, բայց բավակա նաչափ լուսավոր: Վոչ վոք չեր մտնում այնտեղ, բացի Նեյլոյից: Տղան հին տախտակներից մի մոլբերտի*) նման բան սարքեց և նրա վրա մի գորը թուղթ քաչեց, վորպեսզի նկարի այն, ինչ-վոր մտադրվել եր: Նեյլոն յերբեք վոչինչ չեր սովորել: Ներկեր գնելու փող չու ներ: Նա առանց այդ ել հաճախ հաց քիչ եր ուտում, վոր ձեռք բերի գոնե ամենահասարակ նկարչական պարագաները: Նա իր տեսածը կարող եր նկարել միայն սևով կամ սպիտակով: Գորը թղթի վրա նա կավիճով ուրվագծեց ծերունու խոշոր կերպարանքը, վորը նստած եր կտրված ծառի վրա: Նա հաճախ եր տեսել, թե ինչպես ծերունի փայտահատ Միշելը յերեկոները նստում եր այդ գիրքով:

Ամեն որ, վերագառնալով աշխատանքից, Նեյլոն չարչարվում եր իր նկարի վրա, և Պատրաշը ժամերով պառկում եր նրա մոլբերտի մոտ: Նեյլոն մի գաղտնի, գուցե և համարձակ հույս եր տածում՝ ներկայացնելու իր նկարը Անտվերպենում հայտարարված մրցանակաբաշխությանը: Մրցանակաբաշխությունը ազատ եր բոլոր շնորհալի տասնութ տարեկանից վոչ ավելի հասակ ունեցող այն պատանիների համար, վորոնք կը ներկայացնեն առանց կողմնակի ոգնության կավիճով կամ մատիտով կատարած աշխատանքը: Դատավոր եյին նշանակված Անտվերպենի յերեք ականավոր նկարիչները: Մրցանակ չահող պատանին տարեկան յերկու հարյուր Ֆրանկ պիտի ստանա:

Ամբողջ գարունը, ամառն ու աշունը Նեյլոն աշխատում եր իր նկարի վրա: Յեթե նկարը մրցանակ ստանա, ապա դա հնարավորություն կտա նրան սովորել այն արվեստը, վոր նա այդքան ուժգին սիրում եր:

*) Նկարչական հաստոց:

Տղան վոչ վոք չուներ, վոր բացատրեր նրան նկարչության անհրաժեշտ կանոնները, բայց և այնպես նա այնպես պատկերեց ծեր փայտահատի խորշումած, հյուսածված դեմքը, վոր ծառի կոճղին միայնակ նստած ու մտքի մեջ ընկած ծերունին, չըջապատված թանձրացող մթնշաղով, կարծես կենդանի լիներ: Ի հարկե, նկարում վորոչ անկանոնություններ ու սխալներ կային, բայց նա այնքան ճշգրիտ և այնպես լավ եր տալիս ծերունու տրամադրությունը, վոր ուժեղ տպավորություն եր թողնում:

Նեյլոն վոչ վոքի չեր ասում իր նկարի մասին: Պապը չեր հասկանա նրան, իսկ Ալոիզայի հետ նա այլևս չեր տեսնվում: Միայն Պատրաշին եր նա պատմում իր հույսերի մասին ու շնջում:

— Ռուբենսն ինձ մրցանակ կտար: Յես կարծում եմ, վոր կտար:

Պատրաշը նայում եր նրան իր խելացի աչքերով և տղային թվում եր, թե նա հասկանում ե իրեն:

Նկարները պետք եր ներկայացնել դեկտեմբերի 1-ին, իսկ վորոշումը կհայտարարվի դեկտեմբերի վերջին որը, վորպեսզի մրցանակ ստացողը կարողանա ուրախ հանդիպել նոր տարին: Վաղ ձմեռային առավոտվա աղջամուղջին, Նեյլոն, վորի սիրտը թպրտում եր մերթ հույսով, մերթ տագնապով, դրեց իր մեծ նկարը կանաչ սայլակի վրա և Պատրաշի ոգնությամբ քաղաք տարավ:

«Գուցե իմ նկարը վոչինչ չարժի՞», ի՞նչ իմանաս» մտածում եր նա յերկչոտությամբ:

Յերբ նա հանձնեց իր նկարը, նրան սկսեց թվալ, թե շատ մեծ համարձակություն, շատ մեծ հիմարություն եր մտածել, թե ինքը, մի վոտաբորիկ, կխապրազեա տղա կարող եր նկարել մի նկար, վորի վրն իսկական նկարիչները համաձայնվեյին թեկուզ նայել: Սակայն կամաց-կամաց նա հանգստացավ: Նրան յերեվում եր գորը մառախուղի մեջ Ռուբենսի վեհ դեմքն իր իրախտախի ժպիտով, և նա մտածեց:

«Չպետք է վհատվել: Յեթե Ռուբենսը թույլ ու վախկոտի մեկը լիներ, ապա չեր կարող հռչակ ստանալ»:

Խիստ ձմեռ էր: Յերբ Նեյլոն Անավերպենից վերադառնում էր, բուք սկսվեց և գրանից հետո ամեն որ անդադար ձյուն էր դալիս: Բոլոր ճանապարհներն ու կածանները ծածկվեցին սպիտակ ծածկոցով, վտակները սառեցին, սաստիկ ցուրտ էր: Դժվար էր արդեն առավտաները, յերբ դեռ բոլորովին մութ էր, շրջել հարեւանների տները կաթ վերցնելու և դեռ լույսը չբացված քնած քաղաքը տանելու համար: Առանձնապես դժվար էր այդ Պատրաչի համար, վորովհետև Նեյլոն այդ տարիներին մեծացավ ու հասունացավ, իսկ շունը ծերությունից արդեն հաղիվ էր քաշ տալիս վտաքերը սառած գետնի վրայով: Նեյլոն ոգնում էր նրան և հրում յետևից սայլակը, վորը ծանրորեն շարժվում էր անհարմար ճանապարհով:

— Մնա տանը, Պատրաչ: Ժամանակն է արդեն քեզ հանգստանալու: Յես ինքս ել տեղ կհասցնեմ սայլակը, — հաճախ հոմոցում էր նրան Նեյլոն:

Սակայն, յերբ Նեյլոն կանգնում էր նրա տեղը լծափայտերի միջև, Պատրաչը դոմոում էր, չեր թողնում նրան և չեր ուզում մնալ տանը:

— Խեղճ Պատրաչ, յես ու դու շուտով պառկած կլինենք հողի տակ, — ասաց մի անգամ Գասս պապիկը, պարզելով իր նիհար, կնճոտա ձեռքը, փաղաքշելու համար Պատրաչին: — Իսկ ինչ կլինի տղայի դրությունը առանց մեզ:

Մի անգամ, յերբ նա Պատրաչի հետ Անավերպենից վերադառնում էր ձյունոտ գաշտով, վոր սառած էր ու ապակու պես սայթաքուն, Նեյլոն ճանապարհին մի սիրուն տիկնիկ գտավ: Դա մի ծաղրածու յեր, վորի հագին վոսկեգույն տրեզով կարմիր զգեստ կար, իսկ ձեռքին դափ, ինքն ել հաղիվ մի ձեռքի թաթի մեծության էր: Խաղալիքը սիրուն էր: Ծուրջը վոչ վոք չկար, և ով էր կորցրել այն — հայտնի չեր: Նեյլոն չգիտեր ինչ անի: Այդտեղ նրա գլխում մի միտք ծագեց, վոր

այդ տիկնիկն Ալոիզային դուր կգար: Արդեն մթնում էր, յերբ նա անցնում էր աղացպանի տան մոտով: Նա նայեց Ալոիզայի սենյակի լուսամուտին ու մտածեց.

«Ինչո՞ւ չտամ նրան գտածս: Չե՞ վոր մենք այնքան տարիներ ընկերություն ենք արել իրար հետ»:

Ալոիզայի լուսամուտի տակ մի թեք ծակ կար: Նեյլոն բարձրացավ նրա վրա և կամացուկ բաղխեց վանդակավոր պատուհանը: Սենյակում աղոտ լույս էր յերեվում: Աղջիկը բացեց ողանցքն ու վախեցած նայեց դուրս: Նեյլոն պարզեց նրան տիկնիկը:

Վերցրու այս խաղալիքը, յես այն գտա ձյունի վրա, — շնջաց Քա: — Վերցրու քեզ իբրև հիշատակ, Ալոիզա:

Այդ խոսքերով նա վեր թռավ ծածկի վրայից այնքան արագ, վոր աղջիկը ժամանակ չունեցավ շնորհակալություն հայտնելու նրան, և փախավ:

6

Հ Ր Դ Ե Հ

Գիշերը հողմաղացի յետևում հրդեհ ծագեց: Այրվեցին ամբարներն ու շատ հացահատիկ, բայց հողմաղացն ու բնակելի տունը փրկվեցին:

Ամբողջ գյուղակում տաղնապ բարձրացավ, Անավերպենից յեկավ հրչեջ խումբը: Աղացպանն ամեն ինչ ապահովագրել էր, այնպես վոր նա վնասից չեր վախենում: Այնուամենայնիվ նա սաստիկ դժգոհ էր և ասում էր բոլորին, թե հրդեհը չեր կարող պատահարար լինել և վոր անպայման հրդեհել են ամբարները:

Նեյլոն, գիշերն արթնանալով, հարևանների հետ միասին վազեց հանդնելու հրդեհը: Աղացպանը քշեց նրան:

— Դու ետոր թրև եյիր գալիս բակում, յերբ արդեն մութ էր, — բարկացած բղավում էր նա: — Յերևի դու մեզից լավ գիտես, թե վորտեղից է առաջացել հրդեհը:

Նեյլոն քարացալ գարմանքից: Նա չեր կարողա-
նում պատկերացնել իրեն, վոր կարելի յե լուրջ ասել
այսպիսի խոսքեր, և միևնույն ժամանակ չեր հասկա-
նում, թե ինչպես կարելի յե կատակ անել մի այդպիսի
ժամանակ: Աղացականը մյուս որն ել շատ հարեանների
հայտնեց իր կասկածները: Թեև տղայի դեմ վոչ մի
փաստ չկար, բայց լուր տարածվեց, թե մթնելիս նրան
տեսել են աղացականի բակում և վոր նա բարկացած էր
Կոզեսի վրա, թե ինչու նա արգելել էր տղային խաղալ
Ալոիզայի հետ: Միրաչահելով գյուղական հարստին,
հարեանները նույնպես սկսեցին խեթ նայել ժառանգա-
ստի թոռանը և սառն վերարբերմունք ցույց տալ նրան:
Վոչ վոք բացարձակ չեր մեղադրում նրան, բայց
բոլորն աղացականի կողմն էին պահում: Խրճիթներ-
ում և Ֆերմաներում, վորտեղ Նեյլոն ու Պատրաչը
կաթ էյին վերցնում Անտվերպենի համար, նրանք
խիստ դեմքերի և խիստ լուրթյան էյին հանդիպում
առաջվա ժպիտների ու սիրալիլ խոսքերի փոխարեն:
Չնայած վոչ վոք հիմնավոր չեր համարում աղացականի
կասկածները, բայց գյուղացիները վախենում էյին հա-
րուստ Կոզեսի բարկությունից, վորից նրանք բոլորը
կախում ունեյին: Փոքրիկ ու միայնակ, Նեյլոն վոչ
մեկի մեջ կարեկցություն չեր գտնում:

— Դու անարգար ես դեպի տղան, — ասաց մի
անգամ աղացականի կինն իր ամուսնուն: — Նա լավ,
ազնիվ տղա յե և նույնիսկ չարությունից չեր կարող
այդպիսի անպիտան բան անել:

Սակայն Կոզեսը համառ եր և չեր ուզում հրաժար-
վել իր խոսքից: Իսկ Նեյլոն տանում եր վիրավորանքը
հպարտ համբերությամբ, աչխատելով ցույց չտալ,
վոր ծանր ե այդ իր համար: Միայն ծեր Պատրաչի
հետ մենակ մնալիս նա ազատություն եր տալիս իր
զառնությանը:

«Յեթե միայն մրցանակ ստանայի, — մտածում եր
նա: — Այն ժամանակ նրանք կախստան, վոր այդպես
են վարվել ինձ հետ»:

Այնուամենայնիվ տղայի համար, վորը տասնվեց

տարվա մեջն եր և վորն ամբողջ իր կարճ կյանքն ապ-
րել եր մի գյուղում, վորտեղ բոլորը նրան սիրում ե-
յին, ծանր եր, վոր հարեանները զուր տեղը յերես ե-
յին շուռ տվել իրենից: Առանձնապես ծանր եր այդ
բանը ցուրտ, ձյունաշատ ձմռանը, յերբ նա կարող եր
լույս և տաքություն գտնել միայն վորևե հարեանի
սջախի մոտ: Նեյլոն և Պատրաչն ստիպված էյին մի
հերպ գյուլիս պահել հիվանդ ծերունու հետ իրենց հյու-
րակում, վորտեղ հաճախ նստում էյին առանց կրակի,
իսկ յերբեմն ել առանց հացի: Անտվերպենից մի ձեռ-
ներեց մարդ մի սայլ սարքեց իր համար, ջորին լծած,
ու առաջարկեց գյուղական Փերմաներին նրանց հանձ-
նարարությամբ կաթը քաղաք տանել: Բոլորն սկսեցին
նրան տալ կաթը: Միայն մի յերեք-չորս տուն, գըտ-
նելով վոր նա շատ թանկ ե վերցնում, հավատարիմ
մնացին փոքրիկ կանաչ սայլակին: Այդպիսով Պատ-
րաչի կրած ծանրությունը շատ պակասեց, բայց դբա
հետ պակասեց նաև Նեյլոյի վաստակը:

Պատրաչն ըստ իր սովորության կանգ եր առնում
բոլոր ծանոթ տների մոտ և ուշադրությամբ ներս եր
նայում լուսամուտներից: Սակայն վոչ վոք դուրս չեր
գալիս, և նա իր սայլակով առաջ եր շարժվում:

ԾԱՆՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Մտենում եր Նոր տարին: Ամբողջ ժամանակ չե-
յին դադարում սառնամանիքներն ու բուքը: Չյունի
հյուսերը գրեթե մարդու հասակի չափ էյին, իսկ
ջրանցքը ծածկվել եր այնպիսի հաստ սառուցով, վոր
նրա վրայով հեշտությամբ կարող էյին անցնել թե'
մարդիկ և թե' յեղները: Գյուղակը պատրաստվում եր
տոնին: Նույնիսկ ամենաաղքատ տներում թխում էյին
կարկանդակներ և պատրաստում մածուն, դնում էյին
չաքարեղեն և վոսկեղոծված քաղցր բլիթներ: Աղջիկ-
ները գույնզգույն գլխաշորով ու բամբակի կուրտ-

կաներով վաղու՛մ եյին խանութ՝ գնումները կատարելու: Ինչ դուռ ել վոր բացվում եր, ներսից լսվում եր կաթասայի քլքլթոցը և բուրում եր կերակրի անուշ հոտը: Միայն փոքրիկ հյուղակու՛մ եր շատ մութ ու շատ ցուրտ:

Նեյլոն և Պատրաշը բոլորովին միայնակ մնացին, վորովհետև Նոր տարուց մի շաբաթ առաջ մեռավ ծեր պապիկը: Նա արդեն վաղուց կաթվածահար եր յեղել և կարողանում եր միայն թեթևակի շարժել ձեռները և թույլ ձայնով արտասանել թեկ-յերկու սիրալիր խոսքեր: Սակայն այդ կորուստը չափազանց ծանր եր նրանց յերկուսի համար: Պապիկը հանդարտ վախճանվեց քնած տեղը, և յերբ ձմեռային առափոստվա լուսարացին նրանք տեսան նրա անկենդան յերեսը, նրանց վշտին և հուսահատությանը սահման չկար:

Մի ձմեռային ձյունոտ որ Նեյլոն և Պատրաշը գրնում եյին ծերունու դագաղի յետևից: Ուրիշ վոչ վոք չեր ուղեկցում նրան դեպի զերեղմանատուն—միայն պատանի թուր և ծեր շունը:

«Հիմա նա, յերևի, կփափկի ու թշվառ տղային թույլ կտա գալ մեզ մոտ», մտածում եր աղացպանի կինը, աչք գցելով իր ամուսնուն, վորը լուռ ծխում եր ծխամորճը:

Կոզեսը կարծես գլխի յեր ընկնում, թե ինչի մասին ե մտածում կինը: Նա մուսյլ նայում եր լուսամուտից, տան մոտով անցնող խղճուկ հուղարկավորությանը և փնթփնթաց:

— Կարիք չկա ծանոթություն ստեղծելու նրա հետ:

Կինը սիրտ չարեց առարկել: Սակայն յերբ թաղումը վերջացավ և Նեյլոն ու Պատրաշը յետ եյին դառնում նրանց տան մոտով, նա ուղարկեց Ալոիզային, վոր անթառամ ծաղիկներից մի փոքրիկ պսակ դնի դեռ ձնով չծածկված շիրիմի վրա:

Նեյլոն ու Պատրաշը վհատված վերադարձան տուն: Նույն իսկ այդ խեղճ և անհարմար բնակարանից պիտի զրկվեյին նրանք: Նեյլոն մի ամբողջ ամսվա բնակարանի վարձ եր պարտք, և յերբ վճարեց թաղման ծախսերը, նրա մոտ վոչ մի կոպեկ փող չմնաց: Նա գնաց ժամանակ խնդրելու հյուղակի տեր կոչկակարից, վորը Կոզեսի մտերիմ ընկերն եր: Կոչկակարը չհամաձայնեց ժամանակ տալ: Իսկ մի ժլատ և ագահ մարդ եր: Իր պարտքի դիմաց նա վերցրեց խրճիթից այն ամենը, ինչ վոր կար այնտեղ, մինչև վերջին գդալը և ճրագը, իսկ Նեյլոյին ու Պատրաշին հրամայեց հեռանալ տնից հենց մյուս առավոտը: Ամբողջ գլշեր նրանք նստեցին խավար ու ցուրտ հյուղակու՛մ, սեղմված իրար, վորպեսզի դոնե մի քիչ տաքանան:

Մյուս որը Նոր տարու նախորդակն եր:

Յերբ սկսեց լուսաճնալ, Նեյլոն ցնցվեց, ամուր դրկեց իր միակ բարեկամին և դառն արցունքներ թափվեցին հալատարիմ Պատրաշի գլխին:

— Գնանք, Պատրաշ, գնանք, սիրելիս,— շնչում եր նա:— Չսպասենք մինչև մեզ դուրս քշեն: Գնա՛նք:

Պատրաշը հիվանդ վեր կացավ տեղից և նրանք միասին դուրս յեկան հյուղակից, վորին նրանք յերկուսով այնքան սովորել եյին: Անցնելով կանաչ սայլակի մոտով, Պատրաշը, չգիտես ինչու, հոտոտեց այն: Սայլակը նույնպես խլված եր բնակարանի վարձի դիմաց և Պատրաշի լծասարքն իր պղնձե գանգաթելերով ընկած եր ձյունի վրա: Նրանք գնացին ծանոթ ճանապարհով դեպի Անտվերպեն: Իեռ շատ վաղ եր, բայց հարևաններից շատերն արդեն վոտի վրա եյին: Նրանք գրադված եյին իրենց գործերով և վոչ վոք ուշադրություն չեր դարձնում տղայի ու շան վրա: Դռներից մեկը բաց եր և Նեյլոն կանգ առավ այդ դռան: Պապիկը շատ անգամ եր դրացիական ծանոթություններ մատուցել այդ տանն ապրող ընտանիքին:

— Չե՞ք կարող արդյոք մի կտոր հաց տալ Պատ-

բաշին, յերկուդածությամբ հարցրեց Նելլոն: Պատ-
րաչը ծեր է և յերեկվանից վոչինչ չի կերել:

Տանտիրուհին արագ ծածկեց դուռը փնթփնթա-
լով, թե հացը հիմա շատ է թանգացել: Նելլոն և
Պատրաչը հոգնած շարունակեցին ճանապարհը, այլևս
վոչ մի տեղ կանգ չառնելով: Նրանք դժվարու-
թյամբ հասան Անտվերպեն, յերբ աշտարակի վրա
խփեց ժամը տասը:

«Գոնե մի բան լիներ, ծախելի ու Պատրաչի հա-
մար հաց գնելի, մտածում եր Նելլոն: Սակայն նա,
բացի հագի ֆուֆայիկայից ու անդրավարտիկից և
փայտյա քոշերից—ուրիշ վոչինչ չուներ: Պատրաչը
կարծես հասկացավ, թե ինչն է նրան մտատանջում,
և քիթը դիպցրեց նրա ձեռքին:

Ժամը տասնյերկուսին պիտի հայտնեյին, թե ով
է մրցանակ շահել նկարների մրցանակաբաշխությանը:
Այդ պատճառով Նելլոն ուղևորվեց դեպի այն շենքը,
վորտեղ նա թողել էր իր գանձը: Մուտքի աստիճան-
ների վրա և նախասենյակում խմբվել էին պատանիներ-
ըր, — մի քանիսը նրա հասակին, մյուսներն ավելի մեծ
և, բոլորն իրենց ծնողների, ազգականների, կամ բա-
րեկամների հետ: Նելլոյի սիրտը ճմլվում էր յերկյու-
ղից, յերբ նա Պատրաչի հետ խոռոմվեց այդ բազմու-
թյանը:

Աշտարակի ժամացույցը ղողանջուն ձայնով խփեց
ժամը տասնյերկուսը: Դահլիճի դուռը բացվեց և ան-
համբեր, հուզված ամբոխը նետվեց առաջ: Հայտնի
յեր, վոր մրցանակ ստացած նկարները պետք է ցուցա-
դրվեն մյուսներից առանձին: Նելլոյի աչքերը մշուշը
պատեց, գլուխը պատվում էր, վորտեքը ծալվում է-
լին: Յերբ հայացքը պարզվեց, նա տեսավ մուլբերտը
բարձր պատվանդանի վրա, բայց մուլբերտի վրա իր
նկարը չեր: Ինչ վոր մեկի հնչեղ ձայնը հայտարարեց,
վոր մրցանակը շահել է Ստեփան Կիսլենդերը, Անտվեր-
պեն քաղաքի բնիկ, նավահանգստի վերակացուի տղան:
Ինչ կատարվեց գրանից հետո, Նելլոն չեր հիշում:

Յերբ նա ուշքի յեկավ, տեսավ, վոր պառկած է սա-
լահատակին, իսկ Պատրաչը հրձակում է նրան թաթե-
րով ու լիզում յերեսը: Մի փոքր հեռու Անտվերպեն-
յան պատանիների մի խումբ շրջապատել էր մրցա-
նակ շահողին, և բոլորն ուրախ բացականչություն-
ներով գնացին ծովափ ուղեկցելու նրան դեպի տուն:
Նելլոն յերեքայով վեր կացավ ու ամուր գրկեց շանը:
— Ամեն ինչ վերջացած է, սիրելի Պատրաչ, —
չնչաց նա: — Վերջացած է:

Նելլոն նույնպես թուլացել էր քաղցից և հագիով
եր գնում յետ՝ դեպի դյուղը: Պատրաչը քաշ էր գա-
լիս նրա յետևից, գլուխը կախած և պոչը դրած վորտ-
քերի արանքը:

Ուժեղ ձյուն էր գալիս: Հյուսիսից փչում էր
սուր քամին, և դաշտում սաստիկ ցուրտ էր: Շատ
ժամանակ պետք յեղավ ծանոթ ճանապարհն անցնե-
լու համար: Արգեն խփեց ժամը չորսը, յերբ յերևաց
գյուղը: Հանկարծ Պատրաչը կանգ առավ, սկսեց
հոտոտել ձյունը և կլանչելով քանդել այն իր թաթե-
րով: Մի բուլեյից հետո նա ատամներով դուրս քա-
լեց ձյունի միջից մի դարչնագույն կաշվե ծոցի
թղթապանակ ու տվեց այն տղային: Ճանապարհի
կողքին վառվում էր լապտերը, վորը ձյունից ու անձ-
րեվից պաշտպանված էր մի ծածկով: Լապտերի լույ-
սով նա կարգաց թղթապանակի վրայի ազգանունը՝
Կոգես: Թղթապանակը լիքն էր դրամով:

Տղան գանձը պահեց ծոցի մեջ, փաղաքչեց Պատ-
րաչին և արագ առաջ դնաց: Պատրաչը դժվարու-
թյամբ էր հեռուում նրան: Նելլոն ուղևորվեց դեպի
ազգացանի տունը և, կանգ առնելով մուտքի դռան
առաջ, ուժգին բաղխեց դուռը: Դուռը բացեց ազգա-
պանի կինը: Վախեցած Ալոիզան կպել էր նրա շրջա-
զգեստին:

Այդ դո՞ւ յես, խեղճ տղա, — սիրալիր ասաց կինը
արտասուքներն աչքերին: — Գնա, տղաս, քանի չի
վերադարձել Կոգեսը: Այսօր մեզ փորձանք է պատա-

հել՝ նա շատ փող է կորցրել ճանապարհին և հիմա գնացել է վորոներու:

Բայց ել վորտե՞ղ կարելի յե գտնել ես ձյունին: Իսկ այդ մեզ համար սնանկություն է:

Նեյլոն տվեց նրան թղթպանակը և ներս կանչեց Պատրաշին:

— Հենց նոր Պատրաշը գտավ այս փողերը, — շտապ ասաց նա: — Հայտնեցեք այդ պարոն Կոզեսին: Յես կարծում եմ, վոր նա չի հրաժարվի ընդունել ու կերակրել ձեր շանը: Խնդրում եմ մի թողեք Պատրաշին դա իմ յետևից և սիրալիր յեղեք նրա հետ:

Նրանք դեռ ուշքի չէյին յեկել, վոր Նեյլոն կոտորեց, համբուրեց Պատրաշին, շտապ ծածկեց դուռն իր յետևից ու անհետացավ դիշերային մթության մեջ:

8

ԱՆԲՍԺԱՆ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ

Մայր ու աղջիկ խոսք չէյին գտնում զարմանքից և ուրախությունից: Պատրաշը կարոտաբար հրում եր ու չանգոսում սողնակով փակված կաղնի դուռը: Հիշելով Նեյլոյի խնդիրը, նրանք յերկուսով վախենում էյին յետ տալու սողնակը, վոր Պատրաշը չփախչի, և աշխատում էյին, ինչպես կարող էյին գրավել նրա ուշադրությունը և հանգստացնել նրան: Նրանք նրա համար կերակուր ու միս բերին, իրեն կանչում էյին, վոր տաքանա վառվող բուխարու մոտ: Սակայն ամեն ինչ զուր էր: Պատրաշը չէր դիպչում ուտելիքին և չէր հեռանում փակ դռնից:

Ժամը վեցի մոտ յետևի մուտքից վերադարձավ աղացպանը, հողնած-ջարդված ու հուսահատված:

— Մեր բանը բուրդ է, — ասաց նա ընկճված ձայնով: — Մենք ամեն տեղ ման յեկանք լապտերներով և վորոնեցինք, բայց վոչինչ չգտանք:

Կինը պարզեց Կոզեսին թղթպանակն ու սկսեց պատմել, թե ինչպես է գտնվել այն: Աղացպանը լուռ եր և լուռ ծխում եր ծխամորճը:



Նեյլոն մի փոքր վեր բարձրացավ ու գրկեց Պատրաշի վիզը:

Նեյլոն ու Պատրաշը. — 3

Տունը տաք երևաւ և հարմարավոր: Սպասում էյին հյուրերի: Տանտիրուհին ծածկեց սեղանը և վառեց պայծառ լամպը: Այսօր յայտնուեց անկյունում կոխված էյին լապտերիկներ ու դարաված էյին նվերներն իր համար—խաղալիքներ և կոնֆետներ վառ նկարներով թղթերի մեջ: Այսօր անկյունում եր, վոր Պատրաշը պատվավոր հյուր լինի իր համար: Սակայն, վորքան փաղաքում եր նրան, վորքան կանչում եր, նա վոչ մի կերպ չեր գնում տաքանալու բուխարու մոտ և չեր դիպչում ուտելիքին: Վոչինչով չեր հաջողվում գայթակղեցնել նրան: Նա կպել եր դռանը և, ըստ յերևույթին, միայն հարմար ըոպելի յեր սպասում, վոր փախչի:

— Այդ նա տղայի մոտ ե ուզում գնալ, — սասց աղացականի կինը, թափահարելով գլուխը: — Լավ շոն ե, շա՛տ:

Այդ ժամանակ ներս մտավ մի նոր հյուր և դուռը միանգամից չծածկեց: Պատրաշը սպասեց դրանից, դուրս սողոսկեց և վաղեց ձյունի վրայով այնքան արագ, վորքան թույլ էյին տալիս նրա ծեր վոտքերը: Ժամը մոտ տասն եր: Ամբողջ յերեկո, ձյուն եր գալիս, և տղայի հետքերը գրեթե չէյին յերևում: Պատրաշը յերկար հոտոտում եր ձյունը, մինչև վոր դտավ նրա հետքերը: Հետո դրանք նորից կորան, ստիպված եր նորից փնտռել, և այդպես շատ անգամ: Բոլորովին մութ եր: Քամին հանդցրել եր ճանապարհի կողքի լապտերը: Գետինը սառցակալել եր: Խոր մթության մեջ հնարավոր չեր ջոկել բնակարանները: Ճանապարհին վոչ վոք չկար: Միայն ծեր Պատրաշը դաժան սառնամանիքին մենակ հագիլ քայլում եր, հոտոտելով Նելլոյի հետքերը: Դրանք տանում էյին ծանոթ ճանապարհով—դեպի Անտվերպեն:

Արդեն կես դիչերից անցել եր, յերբ Պատրաշը հասավ քաղաք: Քաղաքում բոլորովին մութ եր: Միայն տեղ-տեղ ծածկափեղկերի ճեղքերից յերևում

էյին կարմրավուն կրակներ կամ մի խումբ մարդիկ վերադառնում էյին իրենց տները ձեռքի լապտերներով, յերգելով հարբած յերգեր: Ձյունով ծածկված փողոցներում սեխն էյին տալիս տների բարձր պատերն ու կտուրները: Վոչինչ չեր լավում, բացի քամու վոնոցներից: Քամու հարվածներից ճոճում ու տարուբերվում էյին խառութների ցուցանակները: Այդ յերեկո շատ մարդիկ էյին անցել ձյունի վրայով, շատ հետքեր էյին խաչաձևում իրար հետ, այդ պատճառով ել Պատրաշի համար դժվար եր գտնել այն հետքը, վոր նա վորոնում եր: Յուրտը թափանցում եր մինչև նրա վոտքերը, սառույցի կտորները կտորտում էյին նրա վոտքերը և քաղցն անտանելի տանջում եր նրան: Սակայն նա շարունակում եր վորոնումները, և հետքը վերջ ի վերջո բերեց նրան հրապարակ, դեպի մեծ տաճարը: Ինչ վոր պատահակա՛նության հետևանքով պահակը մոռացել եր կողպել տաճարի դռներից մեկը, և այդ դուռը մնացել եր կիսաբաց: Պատրաշի փնտռած հետքերը շարունակվում էյին շենքի ներսում, ձյունի մի շերտ թողնելով մուգ քարի հատակի վրա: Խորը լության և մթության մեջ առաջ եր անցնում Պատրաշը, հոտոտելով հետքերը, և վերջապես, գտավ հատակին պակած Նելլոյին: Նա մոտ սողաց նրան ու լիզեց նրա յերեսը: Նելլոն, թեթևակի բացականչելով, մի փոքր վեր բարձրացավ ու գրկեց Պատրաշի վիզը:

— Արի պառկենք ու մեռնենք միասին, — շնջաց նա: — Մարդկանց մենք պետք չենք: Յես և դու վոչ վոք չունենք աշխարհում:

Պատրաշը ավելի մոտիկ սողաց ու գլուխը դրեց Նելլոյի կրծքին: Խոր արտասուքներ էյին յերևում տղայի մութ, տխուր աչքերում: Նրանք պառկել էյին իրար սեղմված: Ծովից փչում եր սառը քամին և հակայական, ցուրտ քարե շենքում ավելի ցուրտ եր,

քան բաց դաշտում: Յերբեմն մութ կամարների տակ շրջում էյին չղջիկները: Յերբեմն բարձրադիր յուսամուտի միջով թափանցում էր լուսսի մի շող և իսկույն և յեթ անհայտանում: Նրանք պառկած էյին միասին Ռուբենսի դամբարանի մոտ, անշարժ ցրտից փայտացած:

Հանկարծ ինչ վոր մի սպիտակ փայլ ճեղքեց մթությունը. այդ լուսինը ծագեց: Չյունը կտրվելեր, և լուսինը լուսավորեց այն յերկու հսկայական նկարները, վորոնց յերեսից տաճար մտնելիս տղան քաշել էր վարազույրները: Նեյտն վեր թռավ ու պարզեց ձեռքերը դեպի առաջ: Հրճվանքի արցունքները գլորվում էյին նրա գունատ աչտերի վրայով:

—Վերջապես, յես տեսնում եմ «նրանց»,—բացականչեց նա:—Վերջապես՛ս...

Նրա վտոքերը թուլացան և նա ընկավ ծնկներէ վրա չհեռացնելով աչքերը հոյակապ նկարներից: Մի քանի րոպե լուսնյակի միապաղաղ լուսսը լուսավորում էր Ռուբենսի այդ հրաշալի ստեղծագործությունները, վորոնք մինչև այդ նրան չէր հաջողվում տեսնել: Սակայն, շուտով լուսնյակը թաղնվեց ամպերի յետևը և նորից ամեն ինչ ընկղմվեց խավարի մեջ:

Նեյտն ավելի ամուր գրկեց Պատրաշին:

—Մեր, յերկուսիս վոչ վոք չի անջատի,—չնճաց նա:

...Առավոտյան վաղ մարդիկ գտան նրանց յերկուսին տաճարի հատակին ընկած, սառած: Ծածկոցները յետ էյին քաշված Ռուբենսի մեծ նկարների յերեսից և նրանց վրա էյին ընկնում առավոտյան արևի ճառագայթները: Սառած ընկերների մոտ հավաքվել էր մի ամբողջ բազմություն: Յեկավ նաև մի հայտնի նկարիչ, և ժողովուրդը ճանապարհ տվեց նրան:

—Յես փնտռում եմ այստեղ նրան, վորն ըստ արդարության պետք է յերեկ մրցանակ ստանար,—ա-


սաց նա, դիմելով շրջապատող մարդկանց: —Դա հազվադեպ շնորհքի տեր և շատ խոստմնալից մի պատանի յե: Նա նկարել է մի ծեր փայտահատի, վորը նստել է աշխատանքից հետո, կտրված ծառի վրա և այդ նկարից յերևում է, վոր դա մի մեծ տաղանդ է: Յես շատ եմ ուզում գտնել այդ պատանուն և վերցնել նրան ինձ մոտ, վորպեսզի նկարիչ դարձնեմ նրան:

Նկարիչը չափազանց ուշ էր յեկել:

Լեզվակ. խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբազրիչ՝ Ա. Արզախանյան

Հրատ. 4051, Գլ. լիազոր ն— 9279, Պատվ. 459, Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 17 մարտի, 1937 թ.
Ստորագրված է տպելու 1 ողոստոսի, 1937 թ.
Թուղթ 62×94. Տպագրական 2½ մամ. մեկ մա-
մուլում 26880. նիշ, հեղ. 1¾

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0386459

ԳԻՆԸ 1 Ռ.

1164

УЙДА
НЕЛЛО И ПАТРАШ

Гиз ССР Армении, Ереван 1937